600.0002.08 .01.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունվարի 2001 թվականի №2
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽԻՉ ՑԱՆՑԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՏՐՎՈՂ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԱԽԱԳԾԻ և ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» և «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումից հետո նրանց տրվող գործունեության լիցենզիայի նախագծին (հավելված №1):
2. Հավանություն տալ սակագնային մարժայի համաձայնագրի նախագծին (հավելված №2):
3. Ընդունել ի գիտություն, որ նշված փաստաթղթերը կարող են փոփոխվել սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի համապատասխան որոշմամբ:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ.ՄՈՎՍԵՍՅԱՆ**